796
V-66

02 NOV 2010

Թ. ՄԵՐԱՆԳՈՒԼՅԱՆ

ՓՈՒՏԲՈԼ

796
Ս-56

ՊԵՏՀՐԱՏ • 1935

796
Մ-66

Շ. ՄԵՐԱՆԳՈՒԼՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

ԽԱՂԻ ԾԱԳՈՒՄԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՏԱԿՏԻԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱՆ

038245

ՊԵՏՀՐԱՏ. 1935 ԵՐԵՎԱՆ.

28.06.2013

9199

Հաստատված է ՀՍՍՀ. Ֆ.Կ. ԳԵՐԽՈՐՀՐԴԻ ֆուտբոլի սեկցիայի նիստում, 3 ապրիլի 1935 թ.

Պատ. խմբ. Մ. Մարինոսյան
Լեզվ. խմբ. Հ. Պետրոսյան
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ՝ Սուրեն Թաքյան
Գլավլիտ 207, պատվեր 815
Հրատ. 3368 տիրաժ 3000
Պետհրատի տպարան II Գնունի 4

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Աշխատությունը կազմելիս ոգտագործել եմ իմ յերկարամյա դատավորական պրակտիկան և համամիութենական դատավորական կոնֆերանսի ամփոփումները։

Մասամբ ոգտագործել եմ նաև Վ. ՐԱՅԲԱԿՈՆԻ—«Ֆուտբոլիստների ուղեկիցը» (ՈԳԻԶ. ֆիզկուլտուրա և տուրիզմ—1932 թ.), ինչպես նաև Վ. ՏԱՐԱՍԿԻՆԻ և Վ. ՐԱԲԱԿՈՆԻ—«Ձեռնարկ ֆուտբոլի դատավորների համար» 1935 թ. «գուդոկ»-ի հրատ.) գրքերը։

ՖՈՒՏԲՈԼԻ ՍՊՈՐՏ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԽՍՀՄ ֆիզկուլտ կազմակերպության աշխատանքների վերակառուցման աչքի ընկնող կողմերից մեկը սպորտիվ-տեխնիկական աշխատանքների վերակառուցումն է ու մրցումներ կազմակերպելու նոր մեթոդները։

«Պատրաստ աշխատանքի ու յերկրի պաշտպանության» առաջին և 2-րդ աստիճանի նորմաները, վորպես խորհրդային ֆիզկուլտուրայի աշխատանքի միասնական մեթոդիկան իր ուղղակի ազդեցությունն ունեցավ սպորտի առանձին սեկցիաների աշխատանքների վրա։

Վերոհիշյալը կոնկրետացնելու համար բերենք որինակ, թե ինչպես եյին դրված ֆուտբոլի աշխատանքները մինչև վերակառուցումը և ինչպես է դրված ներկայումս։

Մինչև որս ֆուտբոլի սեկցիաները զբաղվում եյին որացույցներ կազմելով, մրցումներ կազմակերպելով, մրցումներին դատավորներ առաջադրելով և այլն։

Այժմ պահանջվում է վոր սեկցիաները զբաղվեն նաև հետևյալ խնդիրներով։

1. Ֆիզկուլտուրայի ներքին ողակում սկսել ֆուտբոլի ուսուցման նորմալ գործը։

2. Այդ ձևում ընդգրկված հազարավոր աշխատավորներին ընդգրկել «ՊԱՊ»-ի նորմաներում։

3. Կազմակերպել յերեխաների ֆուտբոլի թիմեր՝ առնելով նրանց ուժեղ հսկողության տակ. պիոներական դպրոցական հասակում ֆուտբոլի նորմալ ուսուցման ճիշտ մեթոդիկան սովորեցնել յերեխաներին։

4. Ֆուտբոլի հին թիմերի պարապմունքների մեթոդիկայում նորություններ մտցնել, վերջ տալ վոչինչ չներկայացնող անմիտ

հարվածների պարապմունքներին, որոնք շարունակվում են յերկար տարիներ։

5. Արմատախիլ անել ֆուտբոլի թիմերում հնից մնացած սպորտ խուլիգանության մնացորդները՝ ստեղծելով դատավորների շուրջը լայն դրական կարծիք։

6. Յուրաքանչյուր ֆուտբոլիստի ծանոթացնել ֆուտբոլի ծագմանը և նրա եվոլուցիային։

7. Ֆուտբոլիստին դաստիարակել խորհրդային ֆիզկուլտուրայի բարձր կարգապահությամբ և նրանից պատրաստել ֆիզիկապես բազմակողմանի զարգացած՝ աշխատանքի ու յերկրի պաշտպանության համար պատրաստ խորհրդային քաղաքացի։

ՖՈՒՏԲՈԼԻ ԾԱԳՈՒՄԸ

Մի քանի տեղեկությունների համաձայն ֆուտբոլ խաղը հռոմեական լեգեոնների միջոցով տարածված է յեղել Բրիտանիայում, Գերմանիայում և Գալլիայում։

Մոտավորապես 1849 թ. վոտքով գնդակ խաղալը ֆուտբոլ կոչվեց. հետագայում այդ խաղն առանձին պետություններում արտահայտվեց իր յուրահատուկ կողմերով և համարյա բոլորովին նման չեր ներկայիս ֆուտբոլ խաղին։

Ֆուտբոլի կազմակերպման սկիզբը ավելի հավանական է հաշվել 1860 թվականը, յերբ Անգլիայում այս խաղն ստացավ վորոշակի ձևակերպում, ավելի կամ պակաս չափով միատեսակ կանոններով։

1863 թ. կազմվեց ֆուտբոլի միջազգային միությունը։ Ֆուտբոլի միջազգային միությունը մեծ զգուշությամբ սկսում է վերափոխել այդ ժամանակվա ֆուտբոլի կանոնները։ Այն պաշտոնական կանոնները, որոնք գոյություն ունեն ներկայումս, վերջնական հաշվել չի կարելի, սրանք դեռ շատ անգամ կփոփոխվեն— կհարմարեցվեն խաղի կատարելագործմանը։ Այս տեսակետից հետաքրքիր է ծանոթանալ ֆուտբոլի սկզբնական կանոնների եվոլուցիային։

Սկզբնական շրջանում գոյություն ունեյին հետևալ կանոնները.

1. Դաշտի մաքսիմում յերկարությունը հավասար եր 183 մ., լայնությունը՝ 95 մ., դարպասների լայնությունը՝ 7 մ. 32 սմ. իսկ դարպասի փայտի ծայրերը չունեյին միացնող հորիզոնական փայտ։

2. Թիմերը փոխում եյին իրենց տեղերը յուրաքանչյուր խփած գոլից հետո։

3. Գնդակը հաշվվում եր դարպասն անցած, յեթե անցնում եր դարպասի սյուների միջով՝ անկախ իր բարձրությունից, նույնիսկ այն դեպքում, յերբ գնդակը գտնվեր իր մաքսիմալ բարձրությունում, սակայն սյուների յերևակայական շարունակության մեջ։

4. Յեթե գնդակն ավուտ (գծանց) է լինում կողքի գծից, այն խաղացողը, որը վերջինն է կպել գնդակին, նա գցում է գնդակը խաղի մեջ, գնդակի դուրս յեկած տեղից, և վոչ-վոք իրավունք չունի գնդակին կպչելու, մինչև այն գետնին չկպչի։

5. Յերբ գնդակը գտնվում է խաղացողի մոտ, վերջինիս ընկերները, որոնք գտնվում են հակառակորդի դիմագծում ավելի մոտ քան ինքը, դրանք բոլորը գտնվում են խաղից դուրս (ոֆսայդ) և իրավունք չունեն կպչելու գնդակին կամ խանգարելու հակառակորդին, յեթե իրենցից առաջ 3 հակառակորդ չունեն։ Բայց խաղացողը խաղից դուրս լինել չի կարող, յեթե գնդակը դարպասի կողմից է գալիս։

6. Յերբ գնդակն ավուտ է լինում դիմագծից, յեթե նրան վերջինը կպել է պաշտպանող թիմի անդամը, գնդակը բերվում է խաղի մեջ ազատ հարվածով՝ դիմագծի այն կետից, որտեղից գնդակը դուրս է յեկել, իսկ յեթե գնդակին վերջինը կպել է հարձակվող թիմի անդամը, վերջինիս իրավունք է վերապահվում ազատ հարված կատարելու այն կետից 15 յարդ աջ, որտեղից գնդակը դուրս է յեկել։ Պաշտպանող թիմի անդամները մինչև հարվածը կատարելը պետք է գտնվեն իրենց դիմագծից դուրս։

7. Կատարել վոտանցք (պաղնոժկի), հրել, կամ ձեռքերով բռնել չի թույլատրվում։

8. Խաղացողն իրավունք չունի գնդակը ձեռքով վերցնելու, յերբ նա գտնվում է խաղի մեջ։

9. Արգելվում է կոշիկի և գետրինների վրա մետաղե կամ գուտապերչի մասեր կրել։

Այսպիսի կանոններ գոյություն ունեցին 1863 թվին։

Այժմ տեսնենք՝ ինչ փոփոխությունների յենթարկվեցին այդ կանոնները հետագայում։

1866 թ. «խաղից դուրս» կանոնը նրբացվեց և ընդունվեց հետևյալ ձևակերպումը, որ խաղացողը, յերբ իր առաջ հակառակորդի դիմագծում յերեք հակառակորդ ունի, այս դեպքում չի կարող «խաղից դուրս» լինել։ Նույն թվին որոշվեց դարպասի ուղղահայաց փայտերը միացնել հորիզոնական թոկով. այդ թոկի բարձրությունը գետնից հինգ և կես մետր եր։

1871 թվին դարպասապահին թույլատրվեց խաղալ ձեռքով։ 1873 թվին հիմնադրվեց անկյունային հարվածը, այն ժամանակ, յերբ պաշտպանող թիմի անդամների կողմից կատարվում է ավուտ իրենց դիմագծից.

1875 թվին հորիզոնական թոկը, որը միացնում եր դարպասի ուղղահայաց փայտերը, փոխարինվեցին փայտով, (որ ներկայումս ունենք) և վերջինիս բարձրությունը հողից՝ հավասարեցվեց 2 մ. 44 սմ.

Նույն թվին որոշվեց կողմերը փոխել միայն ընդմիջումից հետո և ոչ թե ամեն մի խփած գոլից հետո։

1881 թվին կանոնների մեջ տեղ տրվեց դատավորի դերի պարզաբանմանը. սկզբում դատավորին թույլատրվում եր անձամբ գոլ խփելու այն դեպքում, յերբ դարպասը գնացող գնդակը դիտավորյալ կերպով ձեռքով բռնում եյին։

1883 թվին գնդակի նորմալ չափսերը կանոնների մեջ նշվեցին։

Նույն թվին հիմնադրվեց կողքի գծից ավուտի ներս գցելը՝ 2 ձեռքով։

1890 թ. հիմնադրվեց 12 մետրանոց հարվածը (Պենալտի) 1894 թ. դատավորի վորոշումները խաղի արդյունքի նկատմամբ ընդունվեցին վորպես վերջնական վորոշումներ։ 1902 թ 6 մետրանոց կիսաշրջանագիծը, որ գոյություն ուներ դարպասների ժամ, պենալտու հրապարակը ցույց տալու համար, փոխարինվեցին այժմյան տուգանքի հրապարակով, տեղափոխելով պենալտու հարվածի կետը հրապարակի ներսը։ 1903 թ. վորոշվեց, որ գնդակը դարպասն անցած պետք է հաշվել ազատ հարվածից։ 1905 թ. դարպասապահին արգելվեց պենալտին խփելու ժամանակ

դարպասից առաջ շարժվել մինչև հարվածի կատարումը։ 1907 թ. վերանայվեց «խաղից դուրս» կանոնը և ընդունվեց, որ խաղացողն իրեն դաշտի կիսում լինել չի կարող «խաղից դուրս»։

ՖՈՒՏԲՈԼԻ ԵՎՈԼՈՒՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ֆուտբոլի ուղին Հայաստանում իր առաջին որից մինչև հիմա, հիմնականում պետք է բաժանել 3 շրջանի։

1-ին շրջանը պետք է համարել 1918 թ., յերբ Հայաստան մուտք գործեց ֆուտբոլն իր պրիմիտիվ հարմարություններով։

Այս շրջանում աչքի յեր ընկնում անհատական խաղը, յերբ թիմի 11 անդամներից յուրաքանչյուրը խաղում եր իր համար, մոռանալով իր կողքին գտնվող դոյության մասին, կատարելով աննպատակ հարվածներ, որոնք խաղի արդյունքին դրական վոչինչ չեյին կարող տալ։

2-րդ շրջանը 1924-26 թ. եր, յերբ ֆուտբոլի սահմանափակ թիմերի վազողների յեռայակների միջև սկիզբ դրվեց մանր պասիրովկայի և կոլեկտիվ խաղի թույլ դրսևորման. այս ունակություններն ել վոչինչ չեն ներկայացնում խաղի նպատակն շտապ ու մտածված ձևով վերջացնելու տեսակետից։

3-րդ շրջանը 1927-33 թվին է, յերբ ֆուտբոլի թիմերը խաղի տեխնիկայի հետ միասին ձեռք են բերում տակտիկական ունակություններ, ինչպես թիմի անդամների շաղկապված խաղը մեկը մյուսի հետ,խաղացողների դասավորումն ըստ հակառակորդի ուժի, հարձակումը հակառակորդ թիմի թույլ թևի վրա յերկար պասիրովկայի կատարումը դեպի հակառակորդի դարպասը, թողնելով վերջինիս յերկար տարածության մեջ՝ չեզոք գերում, գլխով խաղի նպատակահարմար փորձերը։

3-րդ շրջանում նշված ունակություններին գեռ ամբողջովին չեն տիրապետում մեր թիմերը. այս ունակությունները զարգացնելու համար մեծ խթան են հանդիսանալու Յերևանում նոր կառուցվող «Դինամո» ընկերության, Լենինականի և Կիրովականի Ֆ.Կ. ստադիոնները, որոնք հնարավորություն կտան փորձի փոխանակում կատարել մեր Միության ֆուտբոլի լավագույն թիմերի հետ։

ՖՈՒՏԲՈԼԻ ԹԻՄԻ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԸ (ՏՐԵՆԻՐՈՎԿԱՆԵՐԸ) ՑԵՎ ՆՐԱ-ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ֆուտբոլն անկասկած յեղած սպորտ խաղերի ամենաբարդ ձևերից մեկն է, վորը, բացի զվարճություն պատճառելուց, այս ձևով պարապողից պահանջում է հոգե-ֆիզիկական մեծ լարվածություն, ընդհանուր ֆիզիկական զարգացում, յերկարամյա փորձ, մտածված, տակտն և վոր ամենագլխավորն է կոլեկտիվ խաղ, վորի խնդիրն է՝ նպատակահարմար ձևով շաղկապել թիմի ան-

Ընկած գնդակի կանդնեցումը վոտքի ներքանով

դամներին մեկը մյուսի հետ և սրանց ամբողջ գործունեությունը ուղղել մի ընդհանուր նպատակի։

Զատից դուրս դժվար տեխնիկան, բազմապիսի կոմբինացիաները, շտապ հարմարվելը տեղին՝ ըստ հակառակորդի խաղի,— այս բոլորը հետապնդում են այն նպատակը, վոր ֆուտբոլիստը անհրաժեշտորեն պետք է ուժված լինի մի շարք ունակություններով, ինչպես՝ ուժով, ճարպկությամբ, դիմացկունությամբ, համարակությամբ և այլն։

Անկախ այն բանից, թե խաղացողն ինչ վորակի ֆուտբոլիստ է, նրան անհրաժեշտ է անցնել ամբողջ տարին—համապատասխան փորձեր՝ ձմեռը—ձմեռային ձևով—դահուկ, չմուշկ, խոկկեյ և այն անհրաժեշտ ձևերով, վորոնք միշտ մարզում են ֆուտբոլիստի շնչառությունը, սրտի նորմալ աշխատանքը, վազքի, թռիչքի նորմալ տեմպերը, սրա հետ միասին՝ ֆիզկուլտ դահլիճում շարժումներ գնդակով— աչքի չափը պահպանելու, գնդակի կետերը ճիշտ գտնելու և վոտքի ու վզի մկանները շարժման մեջ պահելու համար։ Նույնպիսի փորձեր ֆուտբոլիստին անհրաժեշտ է կատարել գարնանը, թեթև ատլետիկայից, վարժություններ գնդակով, և այսպես տարվա 4 յեղանակներին։ Այդ փորձերն անհրաժեշտ են խաղացողներին, վորովհետև նա գիտի, վոր գնդակին ուժեղ ընթացք տալու համար, վոչ թե հարկավոր է ուժեղ վազել դեպի գնդակը և ամբողջ մարմինը գործի դնել— այլ դրա համար անհրաժեշտ է գտնել գնդակի այն կետը, վորին հարվածելով՝ գնդակը ցանկացած արագությունը կստանա, կամ թե գնդակին ցանկացած ուղղությունը տալու համար վոչ թե հարկավոր է ամբողջ մարմինը ծռել, կամ շրջել գնդակի շուրջը, այլ ամենադժվար գնդակին, կարելի չի ցանկացած ուղղությունը տալ վոտքի մի փոքրիկ թեքումով, նույնը՝ գլխով և այլն։

Այս բոլորի համար է, վոր ֆուտբոլիստն իր սիստեմատիկ փորձերը պետք է ունենա, վորպեսզի կարողանա վարպետորեն տիրապետել գնդակի բոլոր բարդություններին և խույս տա մարմնի զանազան ֆիզիկական ջնասվածքներին (սրտի լայնացման, թոքերի թուլացման, մարմնի վերջավորությունների դուրս ընկնելուն, ձգվածքներին և այլն), հատկապես գարնան սեզոնին, յեթե որգանիզմը չի նախապատրաստված այդ բարդ խաղին ըստ տեխնիկայի և ծանր ֆիզիոլոգիական լարվածության։

Փորձերի ժամանակ անհրաժեշտ է՝ նախ և առաջ յենթարկվել բժշկական քննության, կրկնելով այդ վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ, յուրաքանչյուր փորձի ժամանակ մինչև խաղն սկսելը— անցնել վարժությունների գնդակով՝ վոտքի, գլխի համար, սովորել դարձումներ կատարել ձախ և աջ վոտքով, գնդակը կանգնեցնել գնացող դիրքերում յեղած ժամանակ, հարվածել գնդակին վոտքի ծայրով, միջին և դրսի մասերով, հարվածել գնդակի ուղիղ կենտրոնում, կենտրոնից ցած, բարձր, հետո ձախ և աջ, ամեն անգամ մանրամասն բացատրելով գնդակի ստացած ընթացքի պատճառը։

Ինչպես գնդակը ընկնելիս կանգնեցնել վոտքի յերևսով

Սովորել գնդակն ուղիղ գծով արագ տանել՝ գնդակն իրենցից հեռու չթողնելով. նույնը կատարել շրջանագծի վրայով՝ յերկու վոտքի համար կատարել վարժություններ թեք գծերով սովորել գնդակն իրար տալով վազել ամբողջ դաշտի յերկարությամբ՝ սկզբում յերկու հոգով, հետո յերեք, չորս, հինգ, շարվելով մի գծի վրա, միայն կենտրոնում դասավորումը կատարել այնպես, ինչպես խաղն սկսելու ժամանակ, ավելացնել այդ թիվը մինչև 6-7, այդ վերջին յերկուսին արդեն վերցնելով յերկրորդ շարքի համար, վորոնք ոգնում են յետ մնացած գնդակներին առաջին շարքին հասցնելու համար։

Խաղն սկսելու ժամանակ և ամբողջ խաղի ընթացքում կանգ առնել առանձին մոմենտների վրա, խնդրել, վոր ղեկավարը բացատրի, թե, ինչպես պետք է խփել տուգանքի կամ ազատ հարվածի գնդակները, ինչ ուղղությամբ պետք է խփել, ինչ պետք է աչքի առաջ ունենալ այդ ժամանակ, ինչու այդ պետք է կատարել դատավորի սուլոցից անմիջապես հետո, սովորել ավուտ գցել՝ ուժեղ, յերկար և անմիջապես մինչև հակառակորդի խաղացողների դասավորումը։ Սովորել՝ ինչպես պետք է խփել 11 մետրանոց հարվածը ինչպես պետք է դասավորվեն խաղացողներն այդ հարվածի ժամանակ հակառակորդի դարպասի առաջ։

Անկյունային հարվածը կատարելիս անհրաժեշտ է հարվածել գնդակին այն հաշվով, վոր նա դարպասից 5-6 մետր հեռու ընկնի։ Այս նրա համար է, վոր դարպասապահը հնարավորություն չունենա անմիջապես գնդակը ձեռքով վերցնելու, անհրաժեշտ է փորձեր անել դարպասապահին խանգարելու, թույլ չտալով նրան ուղիղ գծով վազելու գնդակի վրա, կտրել նրա ճանապարհն առանց գնդակին կպչելու։

Փորձերի ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել կիսապաշտպանների և վազողների շաղկապված խաղի վրա. այդ կիսապաշտպաններին պետք է դասավորել վազողների հետ այնպես, ինչպես պաշտոնական խաղերի ժամանակ։

Փորձերի հետ զուգընթաց անհրաժեշտ է, վոր թիմի ավագները սովորեն իրենց պարտականությունները, թե ինչպես պետք է ընտրել այն դարպասը, վորտեղից փչում է քամին, վորտեղ արեգակը չի խանգարում, վորն ավելի հարթ տեղում է գտնվում։

Փորձերի ժամանակ անհրաժեշտ է վերլուծել և սովորել պաշտոնական կանոնները, հատկապես կանգ առնել «խաղից դուրս» (ավստայտ) կանոնի վրա հիշել, որ խաղացողն իր դաշտի կեսում «խաղից դուրս» չի կարող գտնվել, որ «խաղից դուրս» լինելու կանոնը վորոշելու համար հիմք պետք է ընդունել վոչ թե այն մոմենտը, յերբ խաղացողն ստանում է գնդակը, այլ այն մոմենտը, յերբ նրա ընկերը գնդակը նրան է տալիս. պետք է հիշել նաև, որ այն խաղացողը, որը գտնվում է «խաղից դուրս» բայց մասնակցություն ցույց չի տալիս խաղի ընթացքին, չի խանգարում հակառակորդին, այդ պատճառով խաղը չի ընդհատվում։

Ֆուտբոլի մեջ «խաղից դուրս» լինելու կանոնը ունի մի շարք նրբություններ, որոնք շատ անգամ թյուրիմացությունների առիթ են տալիս նույնիսկ միջազգային խաղերի ժամանակ. այս իսկ պատճառով անհրաժեշտ է սիստեմատիկորեն վերլուծել այդ կանոնը։

1-ին դրություն



Գնդակը գտնվում է Ա. խաղացողի ձեռքը, Բ վազում է նրանից մի փոքր յետ, յերկու խաղացողներն էլ ունեն յերկուական հակառակորդ իրենց առաջ։ Ա և Բ գտնվում են խաղի մեջ։

2-րդ դրություն



Ա-վազում է առաջ գնդակի հետ, և անցնում է առաջ. Դ հակառակորդից, չնայած Ա-ի և Բ-ի առաջ յերկու հակառակորդներ չկան, այնուամենայնիվ նրանք յերկուսն էլ խաղի մեջ են, վորովհետև գնդակը գտնվում է Ա-ի մոտ, իսկ Բ-ն գտնվում է գնդակից յետ

3-րդ դրություն



Ա-ն գնդակն ուղիղ գծով հարվածում է դեպի աջ, Բ-հարվածից հետո վազում է առաջ և ընդունում գնդակը, Շ-ն, չնայած գնդակն ընդունելուց հետո իր առաջ չունի յերկու հակառակորդ, բայց և այնպես գտնվում է խաղի մեջ, վորովհետև Ա-ն հարվածելու ժամանակ նա գնդակի գծից յետ եր և առաջ անցավ Ա հարվածից հետո։ Այս դեպքում կարելի յե համոզված ասել, որ հանդիսատեսները բղավեն «խաղից դուրս» վորովհետև նրանց ուշադրությունը կենտրոնացած կլինի Ա-ի վրա, որի մոտ գտնվում է գնդակը, և նրանք չեն նկատի, թե Բ-ն յերբ առաջ շարժվեց։

4-րդ դրություն



Գնդակը գտնվում է Ա-ի ձեռքը, վորն ուղիղ գծով վազում է առաջ. այդ մոմենտին Բ-ն, առանց գնդակն ստանալու, վազում է առաջ՝ Բ-2-րդ կետը, և բղավում է իր ընկերոջը, վոր գնդակն իրեն տա. այս դեպքում Բ-ն գտնվում է խաղից դուրս, և դատավորը պետք է սուլի նույնիսկ այն դեպքում, յերբ Ա-ն գնդակը Բ-ին չի տալիս, վորովհետև Բ-ն իր կանչով ու վազքով գրավեց դարպասապահի և պաշտպանի ուշադրությունն Ա-ից։

5-րդ դրություն



Ա-ն գնդակը տանում է, Բ-ն գտնվում է «խաղից դուրս», բայց խաղին չի մասնակցում. Ա-ն գնդակը յետ է տալիս Բ-2-րդ կետը, Բ-ն վազում է յետ, Գ-ի կողքից վերցնում է գնդակը և ցանկանում է առաջ շարժվել։

Բ-ն գտնվում է խաղից դուրս, յերբ սկսում է յետ վազել, այդ ժամանակ դատավորը պետք է սուլի։

ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏԻ ԳԾԱԳՐՈՒՄԸ ՅԵՎ ՉԱՓԵՐԸ



Ա, Բ և Գ, Դ դիմագծերն են

Ե, Զ, Ե, Ը կողքի գծերն են։

Թ-ն կենտրոնական գիծը, վորով ամբողջ դաշտը կիսվում է յերկու հավասար մասի։

Ժ-դաշտի կենտրոնը, վորտեղից խաղն սկսվում է։

Ի և Լ-ն 16 մ. 50 սմ.—տուգանքի հրապարակը։

Խ և Ծ-ն դարպասի հրապարակներն են 5 մ. 50 սմ.։

Ն. Գ. Հ-ն տասնմեկ մետրանոց հարվածի կետը։

Գագաթներում 0 նշանով գծված աղեղները անկյունային հարվածի կետերն են. այդ աղեղի չափը պետք է լինի մեկ մետր։

ՀՍՍՀ-ССР

դաշտի ուղիղ գագաթնակետերում, վորտեղ միանում են կողքի և դեմքի գծերը, տնկում են մեկական դրոշակ գետնից մեկ մետր 50 սմ. բարձրությամբ, և այդ դրոշակների ծայրերը սրված չպետք է լինեն։

Դարպասի բարձրությունը գետնից՝ պետք է լինի 2 մ. 44 սմ., իսկ լայնությունը 7 մ. 32 սմ.։

ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՏԱՎՈՐԸ

Ֆուտբոլի յուրաքանչյուր պաշտոնական խաղ ունի յուր դատավորը, վորը հետևում է խաղի պաշտոնական կանոնների պահպանման։

Ֆուտբոլի դատավոր կարող է լինել նա, ով ունի մեծ հարգանք պարապողների մեջ, լավ գիտե խաղի պաշտոնական կանոնները, պարապել է անհրաժեշտ փորձերով, սիրում է հասարակական աշխատանքի կարգով կատարել այդ և կատարում է Ֆիզկուլտ Խորհրդի անհրաժեշտ ցուցումները։

Մի ժամանակ ֆուտբոլի դատավորին նայում էին՝ վորպես տեխնիկական աշխատողի վրա, վորը 90 րոպե անընդհատ ոուլում է դաշտում։

Այժմ մենք դատավորի վրա նայում ենք իբրև մի պաշտոնական անձի, վորին իբրև տվյալ ձևի վարպետի, հանձնարարված է անցկացնել մրցումը, պահպանելով նրա պաշտոնական կանոնները դրսևորելով խորհրդային ֆիզկուլտուրայի բարձր կարգապահությունը, ցույց տալու իր ունակությունները մասսաների դաստիարակման գործում, և, բացի այս բոլորից, ներկայացնել մրցումն անցկացնող կազմակերպությանը, կամ նրա դատավորական կոլեգիային խաղի արդյունքները։

Ֆուտբոլի դատավորը մեր կազմակերպությունից հարգված լավագույն ընկերն է։ Ֆուտբոլիստները պետք է պայքարեն լավագույն դատավորների շուրջն ավելի մեծ հասարակական կարծիք ստեղծելու համար։

Դատավորի վորոշումները խաղի բոլոր խնդիրների վերաբերյալ՝ վերջնական են։

ԽԱՂԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ց. Դ. Ցուցումներ դատավորներին։

Ց. Կ. Ցուցումներ կազմակերպություններին։

Սրանք պաշտոնական կանոնների բովանդակությունն են և պարտադիր՝ կատարելու համար։

1. դաշտը յեվ նրա չափերը

Ֆուտբոլ խաղալու դաշտը ներկայացնում է մի ուղղանկյուն՝ 90-120 մ. յերկարությամբ և 45-90 մ. լայնությամբ։

Միջազգային խաղերի ժամանակ դաշտը պետք է ունենա 100-110 մ. յերկարություն և 63-73 մ. լայնություն։

Ց. Դ. Դատավորը չպետք է թույլ տա խաղալ, յեթե դաշտի գետինը վտանգավոր է խաղացողների համար, և վատ յեղանակի դեպքում դատավորը պետք է վորոշի, թե դաշտի գետինը ինչ չափով կարող է ֆասել խաղացողներին, բայց խաղի որը չպետք է փոխել, յեթե այդ անհրաժեշտ չե։

Ց. Կ. Դաշտի մակերևույթը պետք է հարթ լինի և ըստ հնարավորության՝ կանաչով ծածկված։

Սովորաբար դաշտի չափերն են՝ 105×70 մ.։

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, վոր անկյունային հարվածը կատարելու համար թափ առնելու (զու քաշելու) տեղ լինի։

---

2. ինչպես պետք է գծագրել դաշտը

Դաշտն ամբողջովին պետք է սահմանափակված լինի գծերով։ կարճ գծերը կոչվում են դեմքի, իսկ յերկարները՝ կողքի։



նկ. 9—Ինչպես գծագրել դաշտը

Ֆուտբոլի դաշտը սահմանափակող դեմքի և կողքի գծերը պետք է կազմեն ուղիղ անկյուններ (տես դաշտի գծագիրը)։

Ամեն մի անկյան գագաթում պետք է դրոշակ տնկած լինի, վորի փայտի բարձրությունը պետք է լինի 1 մ. 50 սմ.-ից վոչ պակաս և ծայրը բութ։ Ամեն մի անկյան գագաթից 1 մետր շառավղով գծվում է աղեղ՝ մինչև կողքի և դեմքի գծերի հետ հատվելը. այդ աղեղի միջից և կատարվում անկյունային հարվածը։ Կողքի գծերի մեջտեղերը կամ կենտրոնները միացվում են մեկը մյուսի հետ մեկ ուղիղ գծով, վորը կոչվում է «միջին գիծ»։ «Միջին գիծ» մեջտեղը ներկայացնում է դաշտի կենտրոնը, վո-

Նկ. 9 ա—

ը պետք է պարզ նշանակած լինի. դաշտի կենտրոնից 9 մետր շառավղով մեկ շրջան է գծվում։

Դեմքի գծերը պետք է անցնեն դարպասների միջով. դաշտի վրա գտնվող բոլոր գծերը պետք է ունենան 5-10 սմ. լայնություն և պետք է գտնվեն դաշտի մակերևույթի հետ մի հարթության վրա. այդ գծերը չի կարելի նշանակել փոքրիկ ակոսներով։

8. Դ. Դատավորը չպետք է թույլատրի չգծագրված դաշտում խաղալ։ Դատավորը դաշտի վրա 4 դրոշակից ավելի չպետք է թույլատրի։ Դատավորը չպետք է թույլատրի անկյունային հարվածի կատարման ժամանակ այդ դրոշակները ծռել կամ հանել։

8. Կ. Դաշտի գծագրումը պետք է կատարել վառ գույնով, վորը տարբերվի գետնի գույնից. ցանկալի է գծել կավճով, կրով, թեփով, ավազով, բայց վոչ մի դեպքում փայտյա ձողերով կամ քարերով։ Կողմնակի բոլոր առարկաները պետք է հեռացնել կողքի գծերից՝ առնվազն յերկու մետր և դեմքի գծերից՝ առնվազն 4 մետր։

---

3. Դարպասներ

Դեմքի գծերի վրա, անկյուններից հավասար հեռավորության վրա, դրվում են դարպասները, վորոնք կազմված են յերկու ուղղահայաց և մեկ հորիզոնական փայտերից։ Դարպասի ուղղահայաց փայտերը դրվում են մեկը մյուսից 7 մ. 32 սմ. հեռավորության վրա, իսկ հորիզոնականը գետնից պետք է բարձր լինի 2 մ. 44 սմ.։ Դարպասի թե ուղղահայաց և թե հորիզոնական պարագաները պետք է փայտից լինեն, պետք է ունենան ուղղանկյուն կտրվածքներ, վորոնց հաստությունն ու լայնությունը պետք է լինի 12 սմ.։ Հորիզոնական փայտի փոխարեն չի կարելի թոկ կապել, և ընդհանրապես դարպասի հորիզոնական փայտը չպետք է կռանա։ Դեմքի գծի այն մասը, վորն անցնում է դարպասի յերկու ուղղահայացների միջով, կոչվում է «դարպասի գիծ»։ Դատավորը չպետք է թույլատրի, վոր խաղացողները դարպասի հորիզոնական փայտը կռացնեն. կռացնողին նախազգուշացնում են, իսկ նույնը կրկնվելու դեպքում նրան դաշտից դուրս պետք է հանել։

Ց. Կ. Դարպասը պետք է ներկել պարզ գույնով. դարպասի հետևը պարանի ցանցը պետք է լինի, որն ամրացվում է գետնին դեմքի գծից 1/5 մ. վրա. դարպասի առջև ուղղահայաց փայտերի հետևը զուգահեռ փայտեր տնկելը, ցանցն ամրացնելու նպատակով, արգելվում է։



Նկ. 10—Ֆուտբոլի դարպասը

4. Դարպասի հրապարակը

Դարպասի ուղղահայաց փայտերից 5 մ. 50 սմ. հեռավորության վրա, դեմքի գծին ուղղահայաց, քաշում են յերկու գիծ, յուրաքանչյուրը 5 մ. 50 սմ. այդ գծերի ծայրերը միացնում են ուղիղ գծով՝ դեմքի գծին զուգահեռ. ստացված ուղղանկյունը կոչվում է դարպասի հրապարակ։

5. Տուգանքի հրապարակ

Նույն ձևով դարպասի ուղղահայաց փայտերից 16 մ. 50 սմ. հեռավորության վրա քաշում են յերկու նոր գիծ, որոնց ծայրերը միացնում են ուղիղ գծով։ Ստացված ուղղանկյունը կոչվում է «տուգանքի հրապարակ»։ Տուգանքի հրապարակում դարպասի ուղիղ մեջտեղից 11 մ. հեռավորության վրա հատուկ նշան են անում, որտեղից և կատարվում է 11 մետրանոց հարվածը։

Ց. Դ. Դատավորը չպետք է թույլատրի խաղալ, յեթե տուգանքի հրապարակը չի գծված։

---

6. գնդակ

Գնդակը պետք է կլոր լինի և մինչև խաղի սկիզբը պետք է ունենա 68-70 սմ. արտաքին շրջագիծ, իսկ քաշը մինչև խաղի սկիզբը պետք է լինի 370 գրամից մինչև 425 գրամ։ Գնդակի դրսի մասը պետք է պատրաստված լինի կաշվից։

Ց. Դ. Մինչև խաղն սկսվելը պետք է դատավորը համոզվի, թե արդյոք գնդակը համապատասխանում է կանոններին։

Ց. Կ. Գնդակը տալիս է այն թիմը, որը հանդիսանում է դաշտի տերը, իբրև պահուստ խաղի համար պետք է ունենալ պատրաստի գնդակ։

---

7. Խաղացողների կոշիկները

Խաղացողների կոշիկները մետաղյա ծեծված մասեր չպետք է ունենան, թեկուզ և նրանց յերեսը կաշի քաշած լինի։ Բութակների վրայի մեխերը պետք է լավ խփված լինեն, կաշվի յերեսին հավասարեցրած։ Ներբանի վրայի բութակները պետք է պատրաստված լինեն կաշվից՝ կլոր կամ տափակ ձևի, 1/25 սմ.-ից վոչ ավելի տրամագծով և նույնչափ բարձրությամբ, և սրածայը չպետք է լինեն։ Ներբանի վրայի բութակները պետք է ամրացված լինեն վոտքի թաթի ամբողջ յերկարությամբ։ Բութակների համար արգելվում է գործադրել ամուր գուտապերչ, կամ մետաղ։ Թույլատրվում է գործածել փափուկ ռեզին և սարքել կխսազնդաձև բութակներ։ Յուրաքանչյուր խաղացող, որի կոշիկները չեն համապատասխանում այս կանոններին, հեռացվում է դաշտից՝ կոշիկները փոխելու համար։

Ց. Դ. Խաղի սկզբում դատավորն իրավունք ունի նայելու խաղացողների կոշիկներին։ Դատավորը պետք է հեռացնի դաշտից այս կամ այն խաղացողին, յեթե խաղի ընթացքում պարզվում է, որ նրանց կոշիկները չեն համապատասխանում կանոններին։

Ց. Կ. Խաղացողները պետք է հետևեն, որ իրենց կոշիկները համապատասխանեն կանոններին, և պետք է հիշեն, որ համապատասխան կոշիկներ չունենալու դեպքում նրանք կհեռացվեն դաշտից։ Անհրաժեշտ է հիշել որ բութակները մաշվում են և մեխերը դուրս են ցցվում։

Տ. Խաղացողները

Խաղին մասնակցում են յերկու թիմ, յուրաքանչյուրը 11 հոգուց կազմված։ Խաղն սկսելու ժամանակ յուրաքանչյուր թիմ

Նկ. 11—Ինչպես պետք է հագնվեն ֆուտբոլիստները (աջից առաջինը դարպասն է)։

պետք է կազմված լինի առնվազն 8 հոգուց, և յեթե խաղն սկսվելուց հետո թիմը մնում է ութ հոգուց պակաս, խաղը դադարեցվում է։ Խաղը սկսվելուց հետո, բժշկի կամ դատավորի կողմից հաստատված դժբախտ պատահարի պատճառով խաղից դուրս յեկած խաղացողին կարելի յե փոխարինել ուրիշ խաղացողով՝ նույն թիմի պահեստի ուժերից։ Յուրաքանչյուր թիմին իրավունք է վերապահվում այդպիսի դեպքերի հիման վրա փոխել միայն յերեք խաղացող։

Խաղից ուշացած խաղացողը կարող է խաղի մեջ մտնել ամեն դեպքում, յերբ գնդակը դուրս է յեկել խաղից կամ խաղը վորևե պատճառով ընդհատվել է, չմոռանալով այդ մասին անձամբ հայտնել դատավորին։ Դաշտից դուրս գալու համար խաղացողները պետք է խնդրեն դատավորների թույլատվությունը. դաշտից պատժի ձևով հեռացրած խաղացողին չի կարելի փոխարինել ուրիշով։

Ց. Դ. Դատավորը կարող է մերժել խաղացողի՝ դաշտից դուրս գալու թույլատվության առաջարկը, յեթե նա համոզված է, որ այդ անհրաժեշտ չե։ Դաշտից ինքնակամ հեռացած խաղացողին չի թույլատրվում նորից մասնակցել խաղին։

Ց. Կ. Յեթե խաղացողը ծանր վնասված է, նա կարող է հեռանալ առանց դատավորից թույլատվություն խնդրելու։ Անհրաժեշտ է, խաղացողները հիշեն, որ խաղի մեջ մտնելու համար դատավորից թույլատվություն պետք է խնդրել։ Նույնը պետք է անել և խաղից դուրս գալու համար։

Ժ. Դարպասի ընտրությունը

Խաղն սկսելուց առաջ դատավորը թիմի ավագների միջոցով վիճակահանություն է կատարում կողմերն ընտրելու կամ սկզբնական հարվածի իրավունք տալու համար։

Ց. Դ. Դատավորը պարտավոր է հիշել, թե վոր թիմն սկզբնական հարվածը կատարեց։

---

10 Խաղի տեվողությունը

Ֆուտբոլի պաշտոնական խաղը տևում է 90 րոպե, որը բաժանվում է յերկու հավասար խաղամասերի, յուրաքանչյուրը 45 րոպե։ Յեթե խաղաշրջանը կամ մրցումը անց է կացվում ոլիմպիական ձևով, յերբ անհրաժեշտ է խաղի հաղթող թիմը հայտնաբերել, և այդ հնարավոր չի յեղել 90 րոպեյի ընթացքում, այս դեպքում տրվում է լրացուցիչ ժամանակ՝ հետևյալ կարգով։ 90 րոպեյից հետո տրվում է 10 րոպե ընդմիջում, որից հետո կատարվում է վիճակահանություն՝ կողմերն ընտրելու կամ սկզբնական հարվածի իրավունք ստանալու համար, և խաղը շարունակվում է 30 րոպե, և այդ նորից բաժանվում է յերկու խաղամասերի, յուրաքանչյուրը 15 րոպե։ 1-ին 15 րոպեյից հետո թիմերն առանց վիճակահանության փոխում են կողմերը և շարունակում մրցումը։ Այս դեպքում սկզբնական հարվածը տալիս է այն թիմը, որն ընտրել է դաշտի կողմը հավելյալ ժամանակում. յեթե հավելյալ ժամանակի ընթացքում խաղը նորից վերջանում է վոչ վոքի հաղթող թիմը չի հայտնաբերվում, այս դեպքում կրկին վիճակահանություն է կատարվում և խաղը շարունակվում է, բայց վոչ ավել, քան 15 րոպե։ Վերջին 15 րոպեյի ընթացքում վոր թիմին հաջողվում է մեկ գնդակ անցկացնել հակառակորդի դարպասով, այդ նույն րոպեյին դադարեցվում է խաղը, անկախ այն բանից, թե վերջին 15 րոպեյից քանի րոպե յե անցել։ Իսկ յեթե այդ վերջին 15 րոպեյի ընթացքում հնարավոր չի լինում պարզել խաղի արդյունքը, այս դեպքում դատավորը դադարեցնում է խաղը և այս մասին հայտնում է մրցում անցկացնող կազմակերպության։

3. Դ. Խաղը վորևե պատճառով ընդհատվելու դեպքում դատավորը 90 րոպեյին ավելացնում է այնքան, ինչքան ժամանակ կորել է ընդհատման ժամանակ։ Այդ ժամանակը պետք է ավելացնել խաղի այն կեսին, յերբ տեղի յե ունեցել ընդհատումը։ Գնդակի նորմալ ձևով խաղից դուրս գալը, համաձայն ստորև բերած կանոնների, խաղի ընդհատումը չի հաշվվում։ Խաղի ընդհատում կարող է տեղի ունենալ դժբախտ պատահարների, գնդակը փչանալու, հանդիսականների՝ խաղին խառնվելու և այն բոլոր դեպքերում, յերբ անհրաժեշտ է լինում վերացնել խաղի նորմալ ընթացքը խանգարող ժամանակավոր արգելքները։ Ընդհատված ժամանակն ավելացնելու դեպքում, ցանկանալի յե, վոր դատավորն այդ մասին հայտնի թիմի ավագներին։

3. Կ. Թիմերը, դատավորի համար ճիշտ ժամացույց պետք է ունենան։

---

11. Ընդմիջում յեվ կողմերի փոփոխում

Մի խաղամաս 45 րոպե լրանալուց հետո տրվում է 10 րոպե ընդմիջում, որից հետո թիմերը փոխում են իրենց դարպասները, և թիմն անցնում է մինչև այդ իր զբաղեցրած դաշտի հակառակ կողմը։ Ընդմիջումից հետո սկզբնական հարվածը տալիս է այն թիմը, որը խաղի սկզբում ընտրել է կողմը համաձայն վիճակահանության։ Դատավորն իրավունք չունի խաղը շարունակելու առանց ընդմիջումի։

---

12. Սկզբնական հարված

Խաղն սկսվում է դաշտի կենտրոնում անշարժ դրված գնդակին հակառակորդի դիմագծի ուղղությամբ հարվածելով։ Մինչև առաջին հարվածը կատարելը հակառակորդ թիմի անդամները պետք է գտնվեն գնդակից 9 մ. հեռավորության վրա, և խաղացողներից վոչ վոք իրավունք չունի դաշտի միջին գիծն անցնելու՝ հակառակորդի դարպասի ուղղությամբ։ Գնդակը խաղի մեջ է հաշվվում, յերբ նա մի լրիվ շրջան է կատարել, այսինքն գլորվելկամ թռել առնվազն 70 սմ. (գնդակի շրջագծի յերկարությունը)։ Սկզբնական հարված կատարող խաղացողն իրավունք չունի նորից կպչելու գնդակին, մինչև մի ուրիշ խաղացող նրան չկպչի։ Սկզբնական հարվածից անմիջապես դարպասն անցած գնդակը չի հաշվվում. յեթե սկզբնական հարվածն այս կանոններով չի կատարված, հարվածը պետք է կրկնել։ Ամեն անգամ, յերբ գնդակն անցնում է դարպասը, և դատավորը հաշվում է այդ, պարտվող թիմը կատարում է սկզբնական հարվածն ըստ կանոնների։ Դատավորն սկսում է խաղի ժամանակը հաշվել յուրաքանչյուր կիսախաղի սկզբում սկզբնական հարվածը կատարելիս. պետք է հիշել, վոր սկզբնական հարվածը կատարելու կանոնը խախտելու համար աղատ հարված չի տրվում, այլ զգուշացնում են կանոնը

խախտողին, իսկ խախտումը կրկնելու դեպքում նրան դաշտից հեռացնում են։

Ց. Կ. Անհրաժեշտ է, որ թիմի անդամները հիշեն, որ խաղն սկսվում է ոչ թե դատավորի սուլելով, այլ սկզբնական հարվածի կատարումով, ուրեմն դատավորի սուլելուց անմիջապես հետո չպետք է անցնել դաշտի գիծը։

---

13. Ցերբ են հաշվում գնդակը դարպաս անցած

Գնդակը դարպաս անցած են հաշվում, յեթե նա ամբողջապես անցել է դարպասի միջին գիծն ուղղահայաց և հորիզոնական փայտերի միջով։ Խաղը տարած է համարում այն թիմը, որի ոգին դատավորը նշանակել է ավելի շատ դարպաս անցած գնդակներ։

Ց. Դ. Դատավորը գնդակը դարպաս անցած է համարում այն դեպքում, յերբ ինքն անձամբ համոզվում է այդ բանում։ Գնդակը ձեռքով դարպաս խփել արգելվում է. այս վերջինը վերաբերվում է նաև այն դեպքին, յերբ գնդակը կողքի գծից ուղղակի դարպաս են նետում։ Գնդակը կարող է իր մեծ մասով դարպասն անցնել, սակայն այդ դեռ չի նշանակում, որ գնդակն ամբողջովին դարպաս անցել է. պատահում է, որ դարպասապահը ցանկանում է գնդակը դուրս նետել և գնդակը ձեռքի հետ միասին ներս է տանում դարպասը. այս դեպքում գնդակն արդեն անցնում է գիծը. յեթե դատավորը պարզ տեսել է վերջին դեպքը, պետք է հաշվի, որ գնդակն անցել է դարպասը։ Նույնը պետք է տեղի ունենա, յերբ դարպասապահը գնդակը բռնում է՝ ինքը գտնվելով դարպասի խորքում, այն ժամանակ, յերբ գնդակն անցել է դարպասի «միջին գիծը» նկատի ունենալով այն, որ դատավորը խաղի սխալ դեպքերի ժամանակ յերբեք իր վճիռը չպետք է կայացնի մեղավոր թիմի ոգին, նա պետք է գնդակը դարպաս անցած հաշվի այն ժամանակ, յերբ գնդակն անցել է դարպասը պաշտպանող թիմի կողմության կամ ձեռքով խաղալուց հետո. այսպես տուգանքի հարվածով պատժել, նշանակում է պաշտպանել մեղավորին։ Այդպիսի դեպքում պետք է լինել վերին աստիճանի ուշադիր և յեթե նա հաստատ համոզված է, որ

կոպիտ, կամ ձեռքով խաղի համար իր սուլոցով պաշտպանողներին ստիպել է պաշտպանությունը դադարեցնել, այս դեպքում չի կարելի հաշվել, որ այդ գնդակը դարպաս անցնել, իսկ այն դեպքում, յերբ դատավորի կարծիքով սուլոցը չի աղդել պաշտպանության տեմպը թուլացնելու վրա և, չնայած ձեռքով կամ կոպիտ խաղին ու գնդակը յետ դարձնելու փորձին, գնդակն անցել է դարպասը, այդ գնդակը պետք է համարել դարպաս անցած։ Դատավորը հատուկ ուշադրություն պետք է դարձնի այն ժամանակ, յերբ խաղացողները դարպասի առաջ խառնվել են իրար։ Դատավորի վորոշումը դարպաս անցած գնդակների վերաբերյալ՝ վերջնական է։

Ց. Կ. Դարպասի գիծը պետք է նշանակված լինի շատ պարզ, իսկ հորիզոնական փայտն՝ ամուր ամրացված։

---

14. Ցերբ է գնդակը խաղից դուրս գալիս

Գնդակը հաշվում է խաղից դուրս յեկած, յեթե ամբողջությամբ անցնում է դեմքի կամ կողքի գծերը՝ գետնից կամ ոդից։ Գնդակը հաշվվում է խաղի մեջ, յեթե յետ է թռչում դաշտի ներսը՝ կպչելով դարպասի փայտերին, անկյունային դրոշակների կոթին, դատավորին և գծային դատավորներին, յերբ նրանք գտնվում են դաշտի սահմաններում։

Ց. Դ. Ցերբ գնդակն անցնում է դաշտի սահմաններից, բայց քամու ուժով յետ է գալիս դաշտը, այդ գնդակը հաշվում է խաղից դուրս յեկած։ Յեթե գնդակը դիպչի դատավորին կամ գծերի վրայի դատավորներին, վորոնք գտնվում են դաշտի սահմաններում, և հետո դուրս թռչի, այդ գնդակը հաշվվում է խաղից դուրս յեկած այն խաղացողի կողմից, վորը վերջինն է հարվածել գնդակին։

Ց. Կ. Դատավորին կպչելուց հետո, նրանից անմիջապես դարպաս անցած գնդակը հաշվում է դարպաս անցած։

---

15. Գնդակը ցերս ցեսելը

Յեթե գնդակը խաղից դուրս է գալիս՝ կտրելով կողքի գիծը, ապա այդ գնդակը խաղի մեջ է բերում գնդակը խաղից հա-

նող թիմի հակառակորդ թիմի վորևե անդամը. վերջինս գնդակը խաղի մեջ է նետում այնտեղից, վորտեղից նա դուրս է յեկել։ գնդակը խաղի մեջ նետող խաղացողը կանգնում է յերկու վոտքով կողքի գծից դուրս՝ գետնի վրա, դեմքը դարձնելով դեպի խաղադաշտը և յերկու ձեռքով իր գլխի հետևից նետում է գնդա-

Նկ. 12—Ինչպես գցել գնդակը կողքի ավուտից

կը ցանկացած ուղղությամբ. գնդակը խաղի մեջ է համարվում, յերբ նա բաժանվում է նետողի ձեռքերից և անցնում է կողքի գծից ներս՝ ոդի միջով. այս ձևով նետած գնդակի անմիջական անցումը դարպասից՝ չի հաշվում, և գնդակը ներս գցող խաղա-

ցողն իրավունք չունի գնդակին կրկին դիպչելու՝ մինչև ուրիշ խաղացող չդիպչի նրան։

3. Դ. Կողքի գծից գնդակը ներս է գցվում առանց սուլոցի, բայց դատավորը պետք է հետևի, վոր գնդակը ներս նետվի կանոնի համաձայն։ Գնդակը ներս նետելու ժամանակ պատահում են հետևյալ սխալները.

1) գնդակը նետում են ներս՝ յերկու վոտքերի վորևե մասն անջատելով գետնից։

2) գնդակը նետում են վոչ գլխի հետևից։

3) խաղացողը գնդակը նետում է մեկ ձեռքով, իսկ մյուսով միայն պահում է գնդակը։

4) խաղացողը գնդակը չի նետում, այլ բաց է թողնում ձեռքից։

5) գնդակը նետելիս յերեսը դեպի դաշտը չի կանգնած։

Գծային դատավորներն ըստ հնարավորության պետք է ավելի մոտ գտնվեն գնդակին՝ առանց խաղադաշտ մտնելու գնդակը նետելու տեղը խաղացողներին ցույց են տալիս գծային դատավորները։

8. Կ. Գնդակը պետք է նետել առանց սուլոցի։

---

16. Հարված դարպասից

Այն դեպքում, յերբ հարվածող թիմի անդամների հարվածից գնդակն անցնում է դիմագիծը, այս դեպքում խաղի մեջ է բերվում պաշտպանող թիմի վորևե անդամի կողմից «դարպասից հարված տալով». այդ կատարվում է հետևյալ ձևով. գնդակը դրվում է դարպասի հրապարակի այն կետում, վորն ավելի մոտ է գնդակը խաղից դուրս գալու տեղին. խաղացողը գնդակին հարվածում է սուլելուց հետո, ցանկացած ուղղությամբ, և նա իրավունք չունի կրկին անգամ դիպչելու գնդակին, մինչև մի ուրիշ խաղացող գնդակին չդիպչի։ «Դարպասից հարված» կատարողի կողմից անմիջապես դարպասն անցած գնդակը չի հաշվվում. հակառակորդ թիմի խաղացողներն այդ հարվածը կատարելու ժամանակ պետք է ոդտվեն 9 մ. հեռավորության վրա. գնդակը հաշվվում է խաղի մեջ, յերբ թռչում, կամ անցնում է գետնի վրա 70 սմ.։

Ց. Դ. Հարվածը կատարվում է դատավորի ազդանշանով՝ սուլելու միջոցով՝ մինչև սուլելը կատարած հարվածը կրկնվում է. անհրաժեշտ է հետևյալը, որ հարվածը կատարվի դարպասի հրապարակի համապատասխան վայրից։

Ց. Կ. Հարվածը կատարելու ժամանակ հակառակորդ թիմի անդամները պետք է գտնվեն գնդակից առնվազն 9 մետր հեռավորության վրա։

---

17. Անկյունային հարված

Այն ժամանակ, երբ գնդակը դուրս է գալիս՝ կտրելով դի-

Նկ. 13— Նշված խփել անկյունային հարվածը

մագիծը պաշտպանող թիմի խաղացողի հարվածից, այս գնդակը խաղի մեջ է բերվում հարձակվող թիմի խաղացողներից որևէ մեկի կողմից «անկյունային հարվածով», որը կատարվում է հետևյալ ձևով.—

Գնդակը դրվում է այն անկյունային աղեղում, որը մոտ է գնդակի դուրս գալու տեղին. խաղացողը հարվածում է դատավորի սուլոցից հետո՝ ցանկացած ուղղությամբ, և իրավունք չունի կրկին դիպչելու գնդակին, մինչև նրան չդիպչի մի ուրիշ խաղացող։



Նկ. 14—Վորտեղ պետք է կանգնի դարպասապահը, երբ հարվածը խփում են աջ անկյունից

«Անկյունային հարվածից» անմիջապես դարպաս անցած գնդակը հաշվվում է։ Հարվածը կատարելու ժամանակ հակառակորդ թիմի անդամները պետք է գտնվեն գնդակից առնվազն 9 մ. հեռավորության վրա. գնդակը խաղի մեջ է հաշվվում, յերբ նա մի լրիվ պտույտ է կատարում, այսինքն թռչում է, կամ գետնի վրայով գլորվում է 70 սմ.։

3. Դ. Անկյունային հարված կատարելու համար դատավորը սուլում է. յեթե հարվածը կատարել է մինչև սուլիչը, հարվածը պետք է կրկնել. անհրաժեշտ է հետևել, որ «անկյունային հարվածը» կատարվի գծված աղեղից և որ հարվածը կատարելու ժամանակ անկյունային դրոշակը չհանվի, չկոացվի և չտեղափոխվի։

---

18. Վիճելի հարված

Այն ժամանակ, յերբ խաղը որևե պատճառով ընդհատված է յեղել, բայց գնդակը դուրս չի յեկել դիմագծերից, կամ կողքի գծերից, այդ դեպքում գնդակը խաղի մեջ է բերում դատավորը «վիճելի հարվածով», որ կատարում է հետևյալ կարգով։ Դատավորը գնդակը վերցնում է իր ուսի բարձրությամբ և խփում է այն կետին, որտեղ խաղը դադարեցված է յեղել։ Գնդակը հաշվվում է խաղի մեջ, յերբ դիպչում է գետնին. յեթե այդ հարվածը կատարելու ժամանակ գնդակը դուրս է գալիս դաշտի սահմանից, նախ քան խաղացողներից որևե մեկն այդ գնդակին դիպչելը, այդ հարվածը կրկնում է դատավորը. խաղացողներն իրավունք չունեն գնդակին դիպչելու մինչև նա գետնին չդիպչի։ Վիճելի հարվածը տեղի յե ունենում ամեն անգամ, յերբ խաղն ընդհատվում է համաձայն վերոհիշյալի՝ անկախ նրա ընդհատման տեղից։

3. Դ. Այն ժամանակ, յերբ խաղն ընդհատվել է որևե պատճառով և հնարավոր չե շարունակել աղատ, առանքի, տասնմեկ մետրանոց, անկյունային, սկզբնական հարված, կամ դարպասից հարված տալ, այս դեպքում գնդակը խաղի մեջ է դրվում վիճելի հարվածով։

---

19. Խաղից դուրս

Յուրաքանչյուր խաղացող, յերբ նա գտնվում է հակառակորդի դաշտի կիսում, գնդակի գծից առաջ, ու իր թիմի անդամը հարվածում է, իսկ իր և հակառակորդի դիմագծի միջև յերկու հակառակորդ չկա, այդ խաղացողը համարվում է «խաղից դուրս» և իրավունք չունի գնդակին դիպչելու, հակառակորդին խանգարելու, կամ որևե կերպ խաղին մասնակցելու։

Կանոնը չի խախտվում, յեթե խաղացողը գտնվում է «խաղից դուրս» ըստ դասավորության, բայց խաղին վոչ մի մասնակցություն ցույց չի տալիս։ Կանոնը խախտվում է այն ժամանակ, յերբ նա մասնակցում է խաղին։ Խաղացողը չի կարող խաղից դուրս լինել անկյունային հարվածի, դարպասից տրվող հարվածի, կողքի գծից ներս նետելու դեպքում, յեթե խաղացողը գտնվում է գնդակի գծից յետ, կամ նրա հետ մի գծի վրա, յեթե գնդակի վերջին հարվածը տվել է հակառակորդը, և խաղացողը գտնվում է դաշտի կիսում։ «Խաղից դուրս» կանոնը հաշվվում է բոլոր աղատ, առանքի, 11 մետրանոց հարվածների ժամանակ։

3. Դ. Դատավորն իրավունք չունի սուլելու և խաղը կանգնեցնելու միայն այն բանի համար, որ խաղացողը գտնվում է «խաղից դուրս». Դատավորը պետք է լավ հետևի վոչ թե այն դրությանը, յերբ խաղացողը գնդակն ընդունում է, այլ այն դրությանը, յերբ իր թիմի անդամը տալիս է նրան գնդակը։ Անհրաժեշտ է, որ դատավորը հիշի, որ յերբ գնդակը գտնվում է խաղացողի ձեռքը, իր թիմի բոլոր անդամները կարող են «խաղից դուրս» լինել, յեթե վերջիններս գտնվում են գնդակի գծի առջև գնդակին հարվածելու ժամանակ, և յերբեք չեն կարող լինել «խաղից դուրս» յերբ նրանք գտնվում են գնդակի գծից դուրս, կամ թե նրա հետ մի գծի վրա։

Ուրեմն՝ 1. խաղացողը միշտ «խաղից դուրս» կլինի, յեթե նա գտնվում է գնդակի գծի առջև, յերբ իր ընկերը գնդակն իրեն է տալիս և իր ու հակառակորդի դիմագծի միջև չկա յերկու հակառակորդ, որոնք ավելի մոտ կանգնած լինեն դիմագծին քան ինքը։

2. Խաղացողը «խաղից դուրս» չի համարվում, յեթե նույն այդ ժամանակ իրենից առաջ դիմագծում յերկու հակառակորդ ունենա.

3. Խաղացողը «խաղից դուրս» չի հաշվվում, յեթե գնդակը

կպել է հակառակորդին, կամ նրա խմբի խաղացողին, վորը գըտնըվում է հակառակորդի դիմագծին ավելի մոտիկ, քան ինքը։ Այն ժամանակ, յերբ խաղացողի դիրքն իր թիմի անդամի հարվածի ժամանակ յեղել է ճիշտ, իսկ հարվածից հետո առաջ է վազել և ընդունել գնդակը՝ առանց յերկու հակառակորդ իրեն առաջ ունենալու, այդ սխալ չի հաշվվում, իսկ յեթե խաղացողն իր թիմի անդամի խաղալու ժամանակ յեղել է «խաղից դուրս», բայց խաղին չի մասնակցել ու հետո յետ է վազել գնդակը վերցնելու և ընդունելու ժամանակ իրեն առջև ունեցել է յերկու հակառակորդ և ըստ կանոնի նա ներկա դեպքում «խաղից դուրս» չի գտնվել, այս դեպքում պետք է սուլել։ Այս կանոնի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել անկյունային հարվածի ժամանակ. անկյունային հարվածը կատարելու դեպքում վոչ մի խաղացող չի հաշվվում «խաղից դուրս», բայց յերբ գնդակն ընկնում է դարպասից քիչ հեռու, և վերջինս խփել է հարձակվողներից մեկը, դարպասի մոտ կանգնած մի շարք խաղացողներ կարող են գտնվել «խաղից դուրս»։ Յեթե խաղացողը գտնվում է «խաղից դուրս», բայց դեպի նրան գնացող գնդակը դիպչում է հակառակորդին, դրա համար չպետք է խաղն ընդհատել։ Խաղացողը «խաղից դուրս» է համարվում վոչ միայն այն դեպքում, յերբ նա գնդակով է խաղում, այլ և այն ժամանակ, յերբ առանց գնդակի վորևե կերպ խանգարում է հակառակորդին։ Արգելվում է խաղից դուրս գտնվող խաղացողին հրել, խփել և այլն։ Իներցիայի պատճառով դաշտի սահմաններից դուրս վազած խաղացողը կարող է գտնվել «խաղից դուրս», յեթե նա վորևե կերպ խանգարում է հակառակորդին, որինակ՝ դարպասի ցանցը մտած և այնտեղ մնացած խաղացողը կարող է խանգարել դարպասապահին։ Չպետք է վոչ մի դեպքում սուլել, յեթե խաղացողը գտնվում է «խաղից դուրս», բայց վոչ մի մասնակցություն չունի խաղին։

Ց. Կ. Խաղացողը «խաղից դուրս» է հաշվվում վոչ թե գնդակ ընդունելու մոմենտին, այլ յերբ գնդակը նրան տալիս է իր թիմի անդամը։ Յեթե հարվածը կատարել է հակառակորդը, կամ թե փոխանցելու ժամանակ գնդակը դիպել է հակառակորդին, խաղացողն այս դեպքում չի գտնվում «խաղից դուրս», յերբ հարվածը կատարել է նույն թիմի անդամը, խաղացողը չի կարող «խաղից դուրս» լինել հետևյալ դեպքերում.

1. Յեթե նա յեղել է գնդակի գծից յետ, կամ նրա հետ մի գծի վրա.

2. Յեթե նա յեղել է դաշտի իր կեսում։

3. Յեթե գնդակն ընդունելիս իր առաջ յերկու հակառակորդ կա, խաղացողը չի կարող ինքը խաղի մեջ մտնել և յեթե նա «խաղից դուրս» է, կարող է հաշվվել խաղի մեջ։

1. Գնդակին հարվածել է հակառակորդը կամ դիպել է նրան։

2. Գնդակը խփել է իր թիմի խաղացողը, վորը հակառակորդի դարպասին ավելի մոտ է գտնվում քան ինքը։

3. Յեթե իր և հակառակորդի դիմագծի միջև խաղի շարունակության ընթացքում հակառակորդ յերկու խաղացողներ են կանգնել։

---

20. Կոպիտ խաղ

Արգելվում է խաղացողին ձեռքերով, կամ վոտքերով խփել. արգելվում է խաղացողին վոտքը դեմ տալ և հետապնդել հակառակորդին վայր գցելու՝ գործադրելով վոտքերը, ձեռքերը, կռանալով նրա հետևը կամ առաջը։ Արգելվում է խաղացողի վրա թռչել և ընդհանրապես գործադրել այնպիսի ձևեր, վորոնց միջոցով խաղացողին ֆիզիկական ցասվածքներ կարելի յե հասցնել։ Թույլատրվում է խանգարել հակառակորդին նրա ճանապարհը կարելով այն ժամանակ, յերբ նա վազում է գնդակը բռնելու. կարելի յե նրա առջևը յետ ու առաջ վազել՝ փակելով նրա ճանապարհը, սակայն առանց ձեռքի ոգնության։

Ց. Դ. Դատավորը պետք է կարուկ միջոցների դիմի կոպիտ խաղին վերջ դնելու համար։ Պետք է հիշել, վոր պատժվում են այն խաղացողները, վորոնք դիտավորյալ կոպտություն են անում։

Ց. Կ. Խմբակները պետք է հիշեն, վոր իրենք պատասխանատու յեն իրենց թիմի վոչ կազմի համար, ուստի չպետք է թույլ տալ, վոր կոպիտ խաղացողները խաղին մասնակցեն, վորոնց պատճառով կարող են իրենք պարտություն կրել։

---

21. Խաղ ձեռքերով

Ձեռքերով խաղ թույլատրվում է միայն դարպասապահին, յերբ նա գտնվում է իր տուգանային հրապարակի սահմաններում, մնացած խաղացողներից և վոչ մեկն իրավունք չունի դիտավորյալ կերպով ձեռքերով խաղալու, յերբ գնդակը խաղի մեջ է։

3. Դ. Խաղացողը տուգանվում է, յերբ դիտավորյալ կերպով և ձեռքերով խաղում, իսկ յերբ պատահարար և գնդակը կպչում ձեռքին, այդ սխալ չի հաշվվում։

3. Կ. Անհրաժեշտ է հիշել, վոր դատավորը սուլում է, յերբ

Նկ. 15—Հրելու սխալ ձևը

խաղացողը դիտավորյալ կերպով ձեռքերով խաղում է. այդ վորոշելու իրավունքը վերապահվում է դատավորին։

---

22. Հրումներ

Հակառակորդին թույլատրվում է հրել միայն այն դեպքում, յերբ նա անմիջապես մոտիկ է գտնվում գնդակին, հիշելով, վոր հրումները չպետք է լինեն կոպիտ ու վտանգավոր։ Արգելվում է հակառակորդին ձեռքերով հրել և առհասարակ խանգարել մարմ-

Նկ. 16—Հրելու հիշտ ձևը

նից հեռացրած ձեռքի մի վորևե մասով. արգելվում է հակառակորդին մեջքից հրել, յեթե նա դիտավորյալ կերպով չի խանգարում խաղացողին. յեթե խաղացողը յերեսը դարձնում է դեպի իր դարպասը, իմանալով, վոր իրեն վրա հարձակվում են, այդ համարվում է հակառակորդին խանգարել։

Ց. Դ. Հրել կարելի յե կրծքով և ուսով, վորի ժամանակ ձեռքը մարմնին սեղմած պետք է լինի. պատժվում է այն խաղացողը, վորը դիտավորյալ կերպով է կանոնը խախտում։

Ց. Կ. Պետք է հարձակվել առանց կոպտության և կոպտությունը չպետք է բացատրել իներցիայի որենքով։

---

23. Դարպասապահի իրավունքները

Դարպասապահն իր տուգանքի հրապարակի սահմաններում իրավունք ունի ձեռքերով խաղալու, բայց իրավունք չունի գնդակն ոդի մեջ վեր գցելով 4 քայլից ավելի անելու։

Ց. Դ. Յերբ դարպասապահն անում է 5-րդ քայլը, պետք է սուլել։

---

24. Հարձակումներ դարպասապահի վրա

Դարպասապահի վրա կարելի յե հարձակվել, յեթե նա դուրս է յեկել իր դարպասի հրապարակի սահմաններից։ Դարպասի հրապարակում դարպասապահի վրա կարելի յե հարձակվել այն ժամանակ, յերբ նա կպչում է գնդակին, կամ դիտավորյալ կերպով խանգարում է հակառակորդի խաղը. այս դեպքում հարձակումը կոպիտ չպետք է լինի։

Ց. Դ. Դարպասապահի վրա հարձակվելու ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել, վորովհետև նա պաշտպանվելու վոչ մի հնարավորություն չունի։

Ց. Կ. Դարպասապահին անհրաժեշտ է ըստ հնարավորության շուտ ազատվել գնդակից, վորպեսզի հարձակման չյենթարկվի։

---

25. Դարպասապահին փոխարինելը

Դարպասապահին խաղի ժամանակ կարելի յե փոխարինել մի ուրիշ խաղացողով (նույն թիմի անդամներից), բայց այդ մասին նախապես պետք է հայտնել դատավորին։ Յեթե դարպասապահը փոխվել է առանց դատավորի գիտության, և նոր դարպասապահը ձեռքերով վերցրել է գնդակը, այդ համարվում է ձեռքի դիտավորյալ խաղ։

Ց. Դ. Դատավորը պետք է հիշի, թե խաղի սկզբում ով է դարպասապահը։

Ց. Կ. Հիշեցեք, վոր դարպասապահին փոխելու համար հարկավոր է դատավորից թույլատվություն խնդրել։



Նկ. 17—Դարպասապահը բռնում է գնդակը գետնի վրա

26. Ազատ հարված

Կանոնների 15, 16, 17, 18, 19, 23, 26, 27, և 28 կետերը խախտելու դեպքում դատավորը խախտողների հակառակորդ թիմին «ազատ հարված» կատարելու իրավունք է տալիս, որը կատարվում է հետևյալ ձևով.

Գնդակը դրվում է դաշտի այն կետում, որտեղ տեղի է ունեցել կանոնի խախտումը. ազատ հարված կատարող թիմի հակառակորդներն իրավունք չունեն մինչև հարվածը կատարելը 9 մետրից ավելի մոտենալ. իսկ եթե ազատ հարվածը տրվում է դիմագծից 9 մետրից պակաս հեռավորության վրա, պաշտպանող թիմի անդամները կարող են կանգնել իրենց դիմագծի, կամ դարպասի միջին գծի վրա: Գնդակը խաղի մեջ է հաշվվում, եթե գլորվում, կամ թռչում է 70 սմ.: Հարվածը կատարվում է դատավորի սուլելուց հետո: Հարվածը կատարող խաղացողը իրավունք չունի կրկին անգամ դիպչելու գնդակին՝ մինչև նրան չդիպչի մի ուրիշ խաղացող: Հարվածը կարելի է տալ ցանկացած ուղղությամբ: Ազատ հարվածից անմիջապես դարպաս անցած գնդակը չի հաշվվում: Ազատ հարվածը տրվում է կանոնները խախտելու համար, անկախ տեղից. այդ վորոշում է դատավորը:

3. Դ. Դատավորը կարող է ազատ հարված տալ այն բոլոր դեպքերում, եթե խաղացողը դատավորի կարծիքով ցանկանում է կոպտություն անել և ընդհանրապես խաղացողը վտանգավոր խաղ է սկսում յերևան բերել, բայց խաղացողի այդ վարմունքը բավական պարզ չե ավելի խիստ միջոցներ ձեռք առնելու համար: Վտանգավոր խաղի համար նշանակված ազատ հարվածի ժամանակ դատավորը մեղավորին զգուշացում է անում: Դատավորը չպետք է ազատ հարված նշանակի, եթե վերջինս առավելություն է տալիս հակառակորդ թիմին:

3. Կ. Հարվածը կատարվում է դատավորի սուլելուց հետո:

---

27. Տուգանքի հարված

Կանոնների 20, 21, 22 և 24 կետերը սեփական տուգանքի հրապարակի սահմաններից դուրս խախտելու դեպքում, դատավորը կանոնը խախտողի հակառակորդի ոգուն տալիս է «տուգանքի հարված» այնտեղից, վորտեղ խախտվել է կանոնը: «Տուգանքի հարվածը» կատարվում է ճիշտ այն պայմաններում, ինչ պայմաններում կատարվում է ազատ հարվածը: «Տուգանքի հարվածից» անմիջապես դարպաս անցած գնդակը հաշվվում է: «Տուգանքի հարված»-ը նշանակվում է այն ժամանակ, յերբ գնդակը գտնվում է խաղի մեջ, և յերբ այդ կանոնների խախտումը կատարվել է տուգանքի հրապարակի սահմաններից դուրս: Կանոնների խախտման տեղը ցույց է տալիս դատավորը:

3. Դ. Տուգանքի հարվածով պետք է տուգանել միայն կանոնները զիտավորյալ կերպով խախտողներին: Դատավորը չպետք է տուգանի, եթե այդ հարվածից ոգտվում է մեղավոր թիմը:

3. Կ. Հարվածը կատարելու ժամանակ դատավորը սուլում է:

---

28. Տասնմետր սեփական հարված

Կանոնների 20, 21, 22, 25 կետերը սեփական տուգանքի հրապարակի սահմաններում խախտելու դեպքում, դատավորը կանոնը խախտողի հակառակորդի ոգին տալիս է տասնմետր մետրանոց հարված, որը կատարվում է այդ հարվածը կատարելու համար հատուկ տեղից՝ հետևյալ ձևով:

Բոլոր խաղացողները, բացառությամբ տասնմետր մետրանոց հարվածը կատարողի և հարվածն ընդունող հակառակորդի դարպասապահի, պետք է տուգանքի հրապարակի սահմաններից դուրս գտնվեն, և դարպասապահը չպետք է դուրս գա դարպասի միջին գծից, մինչև հարվածը կատարվի. գնդակը պետք է խփել առաջ, որը խաղի մեջ է մտնում հարվածից անմիջապես հետո. այս հարվածից հետո անմիջապես դարպաս մտած գնդակը հաշվվում է: Հարվածը կատարող խաղացողն իրավունք չունի կրկին դիպչելու գնդակին՝ մինչև նրան չդիպչի մի ուրիշ խաղացող: Յեթե խաղի վերջում է կատարվել վերոհիշյալ կանոնների խախտումը, որի համար պետք է վորոշել տասնմետր մետրանոց հարված, սակայն խաղի ժամանակը լրացել է, այս դեպքում հարվածը կատարելու համար պետք է ժամանակը յերկարացնել, և այդ հարվածից դարպասն անցած գնդակը համարվում է որինական: Յեթե հարվածը կատարելու ժամանակ գնդակն անցել է դարպասով, պետք է այդ հաշվի առնել, յեթե նույնիսկ պաշտպանվող թիմը

թույլ է տվել կանոնների վորևե խախտում։ Տասնմեկ մետրանոց հարվածն առանց վերոհիշյալ պայմանների կատարելու դեպքում՝ կրկնվում է, բայց կրկնությունը վոչ մի ոգտակար հետևանք չպետք է ունենա տուգանվող թիմի համար։ Տասնմեկ մետրանոց հարվածը կարելի յե նշանակել միայն այն դեպքում, յերբ գնդակը խաղի մեջ է գտնվում։



Նկ. 18 —Ինչպես խփել 11 մետրանոց հարվածը

Ց. Դ. Յեթե խաղացողը խախտում է կանոնը «խաղից դուրս» գտնվող խաղացողի վերաբերյալ, տասնմեկ մետրանոց հարվածը պետք է տալ։ Տասնմեկ մետրանոց հարվածը տրվում է կանոնները դիտավորյալ կերպով խախտելու դեպքում։ Տասնմեկ մետրանոց հարվածը մեղավորին չի ազատում պատժի այլ ձևերից։ Յեթե տասնմեկ մետրանոց հարվածի ժամանակ կանոնը խախտել է հարվածող թիմը, և գնդակն անցել է դարպասով, հարվածը կրկնվում է. յեթե գնդակը դարպասը չի անցել, հարվածը կատարված է համարվում, իսկ յեթե կանոնը խախտել է պաշտպանվող թիմը, և գնդակը դարպասն անցել է, հարվածը կատարված

է համարվում. յեթե գնդակը դարպասը չի անցել, հարվածը կրկնվում է։

Ց. Կ. 11 մետրանոց հարվածի տեղն անհրաժեշտ է նշանակել։ Խաղացողները չպետք է անցնեն տուգանքի հրապարակի սահմանները՝ մինչև հարվածը կատարելը։

---

29. դատավոր

Յուրաքանչյուր խաղի համար պետք է լինի դատավոր, վորը հետևում է կանոնները պահպանելուն և վորոշում է բոլոր վիճելի հարցերը։ Նրա վորոշումները խաղի հետ կապված բոլոր խնդիրների հետ վերջնական են՝ արդյունքի տեսակներից։ Դատավորը հետևում է ժամանակին և խաղի մասին հաշվետվություն է կազմում։ Յեթե խաղացողներից մեկը վոչ-ընկերական վերաբերմունք է ցույց տալիս, դատավորը վերջինիս զգուշացնում է, իսկ կրկնելու, կամ կոպիտ վերաբերմունքի ժամանակ դատավորն իրավունք ունի մեղավորին դաշտից հեռացնելու՝ առանց նախազգուշացնելու և այդ մասին պետք է հայտնի համապատասխան որգանին։ Դատավորը կարող է խաղը դադարեցնել ըստ իր հայեցողության՝ մութն ընկնելու՝ խաղացողների կոպիտ վերաբերմունքի, հանդիսականների խաղին խառնվելու և բոլոր այն դեպքերում, յերբ դատավորը տեսնում է, վոր առողջ ֆիզիկական մրցումը կորցնում է իր նշանակությունը։ Դատավորին իրավունք է վերապահվում խաղը շարունակել, յեթե խաղը դադարեցված է յեղել դժբախտ պատահարի, կամ մի այլ պատճառով։

Այն բոլոր դեպքերում, յերբ խաղն ընդհատված է յեղել կամ խաղացողներին վորևե տուգանք է տրվել, դատավորն այդ մասին հայտնում է համապատասխան կազմակերպության և միաժամանակ մուծում է խաղի արձանագրության մեջ։ Դատավորը պետք է հաշվի առնի խաղի այն ժամանակը, վորը կարելի յե պատահաբար, կամ դժբախտ պատահարի դեպքում, յեթե խաղի ժամանակ խաղացողներից մեկը ՁԸասվածք է ստանում և չի կարողանում խաղը շարունակել, այս դեպքում խաղը դադարեցվում է, ՁԸասվածք ստացողին դուրս են տանում դիմագծի, կամ կողքի գծի հետև, վորից հետո խաղը շարունակվում է։ Գնդակը խաղի մեջ է հաշվում, մինչև վոր դատավորը սուլում է. դատավորը չի կարող իր

վորոշումը փոխել խաղը վերսկսելուց հետո. դատավորի վորոշումներին յենթակա յեն նաև կանոնների այն խախտումները, վորոնք տեղի յեն ունեցել ընդմիջումին կամ այն ժամանակ, յերբ գնդակը գտնվում է «խաղից դուրս»։ Կանոնների դիտավորյալ սիստեմատիկ խախտումը, այս կանոնի իմաստով, համարվում է վոչ ընկերական վերաբերմունք։ Դատավորը պետք է հետևի, վոր ազատ, տուգանքի հարվածները, գնդակը ներս գցելը, անկյունից և դարպասից կատարվող հարվածները, 11 մետրանոց և ոկզբնական հարվածները կատարվեն ըստ կանոնի։ Դատավորի նկատմամբ կատարված հանցագործությունները, վորոնք տեղի յեն ունեցել «խաղից դուրս» գտնված ժամանակ, հաշվվում են խաղադաշտում կատարված հանցագործություններ։

Դատավորի հասցեյին ուղղված կոպիտ և անքաղաքավարի արտահայտությունները կոպիտ վարմունք են համարվում։

Ց. Դ. Խաղի ժամանակ տեղի ունեցած բոլոր դեպքերը լուծում է դատավորը. այս գործում դատավորին ոգնում են գծային դատավորները, վորոնք ամբողջովին յենթարկվում են դատավորին։

Կոպիտ խաղի նկատմամբ դատավորին վերապահվում են բոլոր իրավունքները. յեթե դատավորն զգում է, վոր խաղացողներից մեկը վտանգավոր է խաղի ընթացքի նկատմամբ, նա կարող է խաղը դադարեցնել և տալ ազատ հարված հակառակորդին, միաժամանակ զգուշացնելով հակառակորդին։ Յեթե նույն խաղացողը կրկին անգամ խախտի այս կանոնները, նրան կարելի յի հեռացնել դաշտից։ Նույնը կատարվում է մրցումից դուրս, իսկ խաղացողների, հանդիսատեսների, կամ դատավորի վերաբերմամբ կոպիտ վերաբերմունք լինելու դեպքում նախազգուշացում չի պահանջվում։ Տրված տուգանքների մասին դատավորը պետք է հայտնի համապատասխան կազմակերպության։

Դատավորը պետք է խուսափի հետևյալից.

1. Դաշտում թիմերի անդամների, ներկայացուցիչների և մյուս անձնավորությունների հետ չպետք է վեճի ու կռվի բռնվի։

2. Վորոհիշյալների, կամ մամուլի ներկայացուցիչների հետ դաշտից դուրս վեճի և կռվի չպետք է բռնվի։

3. Ձեռքը չպետք է դիպցնի այն խաղացողին, վորին նա պատժում է, կամ նրա հասցեյին վորևե ծաղրական շարժում չպետք է անի։ Դատավորը մինչև խաղն սկսելը պետք է ստուգի իր ժամացույցը գծային դատավորների ժամացույցների հետ։ Պետք է հաշվի առնել դարպաս անցած գնդակների թիվը և խաղի սկզբնաժամը։

Ց. Դ. Թիմի անդամները, յերբ տեսնում են, վոր հասարակությունը աղմուկ է հանում դատավորի հասցեյին, պետք է միջոցներ ձեռք առնեն պաշտպանելու դատավորին, ինչպես խաղի ժամանակ, նույնպես և խաղից դուրս, հիշելով վոր դատավորի անձեռնմխելիության պատասխանատվությունն ընկնում է թիմի վրա։

Ֆուտբոլի թիմերում անհրաժեշտ է լայն մասսայական աշխատանք տանել դատավորի շուրջը հարգանք ստեղծելու գործում, ինչպես խաղի մեջ, նույնպես և խաղից դուրս։ Դատավորի վճռի դեմ կարելի յե բողոքել, յերբ կատարած սխալը կարելի յի առանց վկաների հաստատել, որինակ՝ չի կարելի բողոքել, յերբ դատավորը գնդակը դարպասն անցած է հաշվել և «խաղից դուրս» գրություն է յեղել։ Կարելի յի բողոքել, յերբ դատավորն ազատ հարվածից ուղիղ գնդակը դարպասն անցած է հաշվել։ Թիմերը պետք է ունենան սուլիչ՝ ուժեղ ձայնով։ Խաղացողներն իրավունք չունեն դաշտում դատավորի հետ խոսելու։ Թիմի ավագը դատավորի հետ կարող է խոսել վորևե խնդրի մասին, նույնպես կարող է հետաքրքրվել դատավորի վճռի պատճառներով, միաժամանակ յերբեք վիճաբանության չբռնվելով դատավորի հետ, կամ թե նրա վորոշումներին հավանության, կամ անբավականության նշաններ արտահայտելով։ Խաղացողները պետք է խույս տան դատավորին վիրավորելուց և նրան միշտ պետք է պաշտպանեն։ Թիմի անդամները պետք է խաղը դադարեցնեն միայն դատավորի սուլելուց հետո։ Բոլոր խաղացողները դատավորի կարգադրությունները կատարում են առանց առարկումների։

---

30. Գծային դատավորներ

Ֆուտբոլ խաղալու ժամանակ պետք է լինի յերկու գծային դատավոր, վորոնք ամբողջովին յենթարկվում են գլխավոր դատավորին և ինքնուրույն վորոշումներ չեն կարող անել։ Նրանք հետևում են վոր յերբ գնդակը խաղից դուրս է գալիս, թիմը

գնդակը ներս պետք է գցի, կամ հարված տա անկյունից, և ոգ-
նում են դատավորին խաղը վարելու գործում։ Դատավորն իրա-
վունք ունի դաշտից հեռացնելու գծային դատավորին և նրա փո-
խարեն ուրիշը նշանակելու, յեթե վերջինս խաղի ընթացքին ա-
վելորդ միջամտություն և ունենում և իրեն անշնորհք է պահում։
այդ մասին դատավորը պետք է հայտնի համապատասխան կազ-
մակերպության։

Գծային դատավորներն իրավունք ունեն դատավորի ուշադ-
ությունը հրավիրելու կանոնները խախտելու այն դեպքերի վրա,
վորոնք դատավորը կարող է չնկատել։

3. Դ. Գծային դատավորները պետք է համարձակ կերպով
դրոշակը բարձրացնեն այն մոմենտին, յերբ գնդակը գիծն անց-
նում է, միաժամանակ ցույց տալով այն տեղը, վորտեղից գնդա-
կը պետք է խաղի մեջ նետել, այլ և այն, թե վոր թիմը պետք
է նետի։ Գծի դատավորները պետք է դատավորի ուշադրությունը
հրավիրեն խաղացողների կողմության և վոչ ընկերական վար-
մունքի համար և դատավորին հայտնեն իրենց կարծիքն այն խնդիր-
ների մասին, վորոնք դատավորի համար վիճելի յեն։

3. Կ. Թիմերը պետք է ունենան դրոշակներ գծային դա-
տավորների համար։ Խաղացողներն իրենց ուշադրությունը պետք
է դարձնեն դատավորի սուլիչին և վոչ թե գծային դատավորնե-
րի դրոշակներին, հիշելով, վոր դատավորը կարող է այլ վորոշում
ընդունել, քան այդ առաջարկում է գծային դատավորը, համա-
ձայն իր տեսածի։

ՀԱՐՑ ՑԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

1. Հ. Ի՞նչ չափսի պետք է լինի ֆուտբոլի դաշտը միջին հաշվով.

1. Պ. 105 մ. յերկարություն, 70 մ. լայնություն։

2. Հ. Վո՞ր գիծն է կանոնում կոչվում դարպասի միջին գիծ։

2. Պ. Այն գիծը, վորն անցնում է անկյունային դրոշակից դարպասի միջով դեպի մյուս անկյունային դրոշակը։

3. Հ. Վո՞ր գիծն է կանոնում կոչվում կողագիծ։

3. Պ. Այն գիծը, վորը միացնում է հակադիր դիմագծերի ծայրերը և կազմում է ուղղանկյուն դաշտը։

4. Հ. Ի՞նչ բարձրություն և յերկարություն պետք է ունենա դարպասը։

4. Պ. 2 մ. 44 սմ. բարձրություն և 7 մ. 42 սմ. յերկարություն։

5. Հ. Ի՞նչ ձևի և ի՞նչ հաստության պետք է լինեն դարպասի փայտերը։

5. Պ. Ուղղանկյուն (գերադասելի յե քառակուսին), բայց վոչ յերբեք կլոր, հաստությունը 12սմ.։

6. Հ. Պարտավո՞ր է դատավորը խաղից առաջ նայելու գնդակին և խաղացողների կոշիկների բութակներին, թե վորքանով են դրանք համապատասխանում կանոններին։

6. Պ. Այո և խաղը չի սկսում այնքան ժամանակ, մինչև կատարվում են նրա կարգադրությունները՝ յեղած թերությունները վերացնելու համար (յեթե թերություններ կան)։

7. Հ. Քանի՞ խաղացող պետք է լինի ամեն մի թիմում, դաշտ մտնելիս, խաղն սկսելու ժամանակ։

7. Պ. Ութից վոչ պակաս։

8. Հ. Կարելի՞ յե դաշտից դուրս արած խաղացողին փոխարինել ուրիշով։

8. Պ. Վոչ։

9. Հ. Ի՞նչպես պետք է վարվել, յերբ խաղի ժամանակ զանազան պատճառներով թիմերից մեկում 8 հոգուց պակաս են մնում։

9. Պ. Դատավորը պարտավոր է խաղը վերջացնել։

10. Հ. Կարող է խաղից ուղացած խաղացողը դաշտ մտնել։

10. Պ. Այո, յեթե թիմի ավագը խաղի սկզբում այդ մասին հայտնել է դատավորին։ Խաղացողն, անկախ նրանից, թե քանի րոպե յե ուղացել խաղից, կարող է մտնել խաղի մեջ՝ սպասելով վորևե պատճառով խաղն ընդհատվելուն, թույլտվություն խնդրելով դատավորից։

11. Հ. Իսկ յեթե ուղացած խաղացողը դատավորից թույլատրվություն չի խնդրել։

11. Պ. Խաղացողին առաջարկում են դաշտից դուրս գալ։

12. Հ. Դատավորն իրավունք ունի՞ առանց նախազգուշացման, կամ նկատողության խաղացողին խաղից դուրս անելու։

12. Պ. Այո, նայած թե խաղացողն ինչպես է իրեն դաշտում պահել, կամ ինչ կանոն է խախտել։

13. Հ. Խաղացողը կարող է դաշտից ինքնակամ դուրս գալ։

13. Պ. Միայն այն դեպքում, յերբ խաղացողը ֆիզիկապես լուրջ ճնաված քներ է ստացել, մնացած բոլոր դեպքերում պետք է խնդրել դատավորից թույլատվություն, ըստ վորում դատավորը կարող է մերժել խաղացողի խնդիրը, յեթե նա գտնում է, վոր այդ անհրաժեշտ չե։

Դաշտից ինքնակամ հեռացած խաղացողը նորից խաղին մաս նակցել չի կարող։

14. Հ. Ցերբ պետք է սուլի դատավորը։

14. Պ. Այն անգամ այն դեպքում, յերբ ինքն անձամբ տեսնում է կանոնի վորևե կետի խախտում, յերբ գնդակն անցնում է դարպասը, դեմքի կամ կողքի գծերը, և ամեն անգամ, յերբ դատավորն անհրաժեշտ է համարում խաղը դադարեցնել։

15. Հ. Ի՞նչպես պետք է սուլի դատավորը։

15. Պ. Դատավորը պետք է սուլի համարձակ, ուժեղ, կարուկ և դեպքից անմիջապես հետո։ Նրա սուլոցները պետք է տարբերվեն խաղն սկսելու և վերջացնելու ժամանակ, դարպասից գնդակն անցնելու ժամանակ, անկյունային, 11-մետրանոց և ազատ հարվածի ժամանակ, այլ և արտակարգ դեպքերի ժամանակ։

16. Հ. Ի՞նչ պետք է անի դատավորը, յերբ հանդիսատեսները բացականչություններ են անում դատավորի հասցեին իբրև թե նա ճիշտ չի դատում։

16. Պ. Դատավորը սուլում է միայն այն դեպքի համար, ինչ անձամբ տեսնում է, վորից յելնելով ուշադրություն չպետք է դարձնել կողմնակի բացականչություններին։

17. Հ. Ի՞նչ պետք է անի դատավորը, յեթե խաղացողին առաջարկվում է դաշտից դուրս գալ, բայց նա դուրս չի գալիս։

17. Պ. Դիմում է թիմի ավագին՝ նրան դաշտից հեռացնելու համար, իսկ յեթե ավագը հրաժարվում է կատարելու դատավորի կարգադրությունը, դատավորը վերջ է տալիս խաղին։

18. Հ. Ի՞նչպես է սկսվում խաղը։

18. Պ. Դաշտի կենտրոնից, սկզբնական հարվածով։

19. Հ. Ի՞նչպես պետք է կատարվի սկզբնական հարվածը։

19. Պ. Գնդակը գտնվում է դաշտի կենտրոնում, անշարժ հարվածը կատարվում է հակառակորդի դարպասի ուղղությամբ, ըստ վորում յեթե հարվածը կատարված է կողմի վրա, այդ դեպքում գնդակը պետք է անցնի դաշտի միջին գիծը։

20. Հ. Անկյունային հարվածից դարպասն անցած գնդակը հաշվում է։

20. Պ. Այո։

21. Հ. Կարող է խաղացողը «խաղից դուրս» գտնվել՝ կողքի գծից ավուտ գցելիս, դարպասից գնդակ խփելիս և անկյունային հարվածի ժամանակ։

21. Պ. Վոչ, չի կարող։

22. Հ. Կարելի՞ յե ժամանակը յերկարացնել 11-մետրանոց հարված կատարելու համար։

22. Պ. Այո, կարելի յե. և խաղը պետք է վերջացնել հարվածն անմիջապես կատարելուց հետո։ անկախ այն բանից, թե անցնում է դարպասը, կպչում է փայտին, յետ է գալիս, կամ թե անկյունային հարվածի իրավունք է ստացվում։

Ցանկ

	էջ
Ֆուտբոլի սպորտ դատավորական սեկցիայի աշխատանքները	5
Ֆուտբոլի ծագումը	6
Ֆուտբոլի էվոլուցիան Հայաստանում	9
Ֆուտբոլի թիմի մարզումները և նրա անհրաժեշտությունը	10
Ֆուտբոլի դաշտի գծագրումը և չափերը	17
Ֆուտբոլի դատավորը	18
Խաղի պաշտոնական կանոնները	18
1. Դաշտը և նրա չափերը	19
2. Ինչպես պետք է գծագրել դաշտը	19
3. Դարպասներ	21
4. Դարպասի հրապարակը	22
5. Տուգանքի հրապարակ	22
6. Գնդակ	23
7. Խաղացողների կոշիկները	23
8. Խաղացողները	24
9. Դարպասի ընդարձությունը	25
10. Խաղի տևողությունը	26
11. Ընդմիջում և կողմերի փոփոխում	27
12. Սկզբնական հարված	27
13. Ցերբ են հաշվում գնդակը դարպասն անցած	28
14. Ցերբ է գնդակը խաղից դուրս գալիս	29
15. Գնդակը ներս նետելը	29
16. Հարված դարպասից	31
17. Անկյունային հարված	32
18. Վրձելի հարված	34
19. Խաղից դուրս	35
20. Կոպիտ խաղ	37
21. Խաղ ձեռքերով	38
22. Հրումներ	39
23. Դարպասապահի իրավունքները	40
24. Հարձակում դարպասապահի վրա	40
25. Դարպասապահին փոխարինելը	41
26. Ազատ հարված	42
27. Տուգանքի հարված	42
28. Տասնմետր մետրանոց հարված	43
29. Դատավոր	45
30. Գծային դատավորներ	47

ՀԱՐՑ ՑԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0302957

9199